

երագ չեմ տեսներ. վասնզի Էյուպցիները կտեսնեն իմ տեսնելիք երագներն, եւ կամ այնչափ շատ երագ կտեսնեն, որ մեզի երագ չմնար տեսնելու:

Շատ տուններու մէջ Պղնձէ քաղաք, Երագահան եւ վիճակահանութեան գրքեր կը գտնուին, բայց Համպուրկի վիճակահանութեան չեն գրուիր:

Հագուստի մասին ալ բնաւ փոփոխութիւն չէ կրած այս թաղն լուսահոգի Յակոբ պատրիարքին օրէն ի վեր:

Այսու ամենայնիւ կիներն, թէպէտեւ աշխատասէր եւ հաւատարիմ՝ զիրար բամբասելու մասին ալ ծոյլ չեն:

Օդը շատ թեթեւ է, եւ այս թեթեւութիւնն ալ այդ միլիոնաւոր երագներէն առաջ եկած է:

ԻԵ.

ՊԷՕՅԻՒՔ ՏԷՐԷ

Գիւղ մ'է, ուր օդափոխութեան համար կ'երթան ընդհանրապէս. բայց երիկ փոխելու համար գացողներ ալ չեն պակսիր:

Գրեթէ ամենէն հարուստներն են, որ այս գիւղը կ'երթան ամառներն եւ շոայութեամբ կեանք կ'անցունեն. շատերն ալ հարուստ կոչուելու համար կ'երթան հոն:

Շատ գեղեցիկ տուներ կան ծովեզերքի հրապարակին վրայ: Կիներն այն տուններուն դռները կրանան եւ այն դիրքով կնստին գաւիթի մէջ, որ անցնողները կտեսնեն անոնց ամուսիններուն նիւթական եւ մարմնական հարստութիւնը:

Գիշերները շատ բազմութիւն կ'ըլլայ այդ հրապարակին վրայ, բազմութիւն սիրահարութիւններու: Այդ հրապարակին վրայ նոր սէրեր կստեղծուին. հոն կ'ըլլան խօսկապներ, նշանտուքներ եւ հարսնիքներ. եւ ինչո՞ւ չըլլան. ամեն մարդ հոն աղէկ ժամ անցունելու համար կ'երթայ. անանկ չէ՞, Մարթա տուտու:

Բնիկ ազգայիներն քիչ են հոս եւ ունին ախոռի պէս տեղ մը, որուն անունը վարժարան դրած են եւ ուր կ'երթան գեղին տղաները՝ ապականեալ օդ ծծելու համար: Վարժարանն ողորմելի վիճակին մէջ է. գեղացին ալ իւր վարժարանէն նուազ խղճալի չէ, որ աչեր ունի եւ չտեսներ, սկանջ ունի եւ չլսեր, իսկ բերան ունի եւ կ'ուտէ: Անիրաւութիւն չընենք. այս վարժարանին վրայ այն ատեն յարձակինք՝ երբ թաղային կանոնաւոր վարժարանի մը հանդիպինք մեր պտոյտներուն մէջ: